

# ՄՇԽԿ

Տարեկան դիրք 10 բուրի. կես տարվանը 6 բուր.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրության մէջ.  
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բայց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.  
Բայտարարութիւնների համար վճարում էն  
Իւրաքանչիւր տողատեղին 1 յ կոպեկ.  
Տէլէֆօն № 253.

Հիմնադիր Գրիգոր Արծրունի

### ՔՐՈՒՆԱԳՈՒԹԻՒՆ

Տնայնագործութեան խնդիրները. — Ներքին  
Տնայնագործութիւն. էջմիածնի աստուածաբանին.  
Երկրաչափից փաստաբանների օգտին. Նամակ  
Տնայնագործութեան խնդիրները. Ներքին լու-  
սարարութիւն. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լու-  
սարարութիւն. — ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.  
Ներքին. — ԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից.

### ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսօր, մարտի 5-ին, Պետերբուրգում  
բացվում է համառուսական տնայնա-  
գործական ցուցահանդէս, որին մաս  
նակցում է և մեր Անդրկովկասը: Մի քանի  
օրից իտալացիներ է բացվել և մի յատուկ  
համապատասխան ժողով, որ պէտք է քննու-  
թեան նկատմամբ տնայնագործութեան զար-  
գացման փորձերէսլ բոլոր խնդիրները:  
Մեր շատ անգամ ենք խօսել տնայնա-  
գործութեան մասին և այժմ էլ հրաւի-  
րում ենք մեր ընթերցողներին ուշադրու-  
թիւնը Պետերբուրգի ցուցահանդէսի և  
ժողովի վրա, աչքի առաջ ունենալով այն  
հարցերը, որ այստեղ պարզված հար-  
ցերը և կայացած որոշումները պէտք է  
արդեւորութիւն ունենան և մեր երկրի  
տնայնագործութեան փրկակի վրա:

Տնայնագործութիւնը — անային մանր  
արհեստն է: Տնայնագործութիւնը մանր  
արհեստաւորների սպորտաւոր էական մի-  
ջոյններից մէկն է: Մեր երկրի ազգաբնա-  
նութեան մի նշանաւոր մասը ապրում է  
տնայնագործութեան արդիւններով: Ար-  
տաքին Գաղտնաբեր ամբողջ գիւղերը գլխա-  
ւորապէս զբաղված են տնայնագործու-  
թեամբ: Անդրկովկասի միւս մասերում  
գործադրողութիւնը, երկաթագործութիւ-  
նը, բրուտութիւնը, արծաթագործու-  
թիւնը, կաւագործութիւնը և ուրիշ  
արհեստներ տարածված են մեծ կամ փոքր  
ստանով ամեն ծայրերում:

Մեր ազգաբնակչութեան մի մասն էլ, որ  
միջին աշխարհի պարագայում տնայնագոր-  
ծութեամբ, պէտք է սկսի պարագայել: Իս-  
կան լեռնական ժողովուրդն է: Այն հողը,  
որի վրա նրանք ապրում են և որը նրանք  
ապրում են, այլ ևս բաւականութիւն  
չունենում ազգաբնակչութեան համար  
և նա ստիպված պէտք է դիմէ աշ-  
խարհաբար ուրիշ միջոցներին: Ահա այդ նոր  
միջոցներից մէկն էլ պէտք է լինի տնայ-  
նագործութիւնը, որի արժանաւորութիւնն

### ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Հայ պրիմ, մարտի 7-ին  
Մարտի 1-ին Բեռլինի համալսարանի ակա-  
դեմիկոս պրոֆէսոր Փոն դէն Ետանէնի նախա-  
նորոգութեամբ վերջապէս կայացաւ Բեռլինի  
արտաքինաբանական ընկերութեան այն արտակարգ  
համաժողովը, որտեղ հայադէտ զր. Վ. Բելքը  
պէտք է զեկուցում տար իր, անցեալ տարվայ  
համաժողովի 4-րդ կարգադրումը գիտնական նը-  
ստանով կատարած ճանապարհորդութեան  
արդեւորական արդեւորութիւնը, որոնք պայծառ  
որոշում են ստանում Հին-Արեւելքի պատ-  
ման վրա ընդհանրապէս և նախահա-  
մարտի խաղերի կամ ուրարտիների պատմու-  
թեան վրա մասնաւորապէս:  
Դր. Վ. Բելքը իր գիտնական զեկուցման  
արդեւորական արդեւորութեան յայտնեց այն զբո-  
րանքները, որ անսպասելի կերպով  
պատահեց պատկանելի գիտնականին հետ (էլէկտ-  
րական տրամվայից վայր է ընկել և վնասվել  
է նրա մի ոտը), որի նախաձեռնութեամբ,  
հարկած ծրարով և նիւթական օժանդակու-

ան է, որ գիւղացին կարող է աւելացնել  
իր տարեկան արդիւնքները իր տնից չը  
հեռանալով և շարունակելով հսկել իր  
անտեսութեան վրա:

Սակայն մի կարևոր հանգամանք դժուար  
բացնում է տնայնագործութեան զարգա-  
ցումը, այդ այն է, որ տնայնագործական  
արդիւնքների ծախսերը կամ վաճառահա-  
նելը չէ կազմակերպված ընդարձակ կերպով  
և բացի դրանից վաճառանցի պահանջ-  
ները մշտական փոփոխութեան են են-  
թարկվում: Երբ որ այն առարկան, որ  
չինում էր տնայնագործը, այլ ևս լաւ  
գնով չէ ծախվում, կամ բոլորովին չէ պա-  
հանջվում, այն ժամանակ մնում է կամ  
կատարելագործել արհեստը այնպէս, որ  
արդիւնքները զուրա գան աւելի նուրբ և  
լաւ, կամ պէտք է փոխել արհեստը և  
ձեռք բերել նոր հմտութիւն:

Ահա մի կողմից այդ վաճառահանման և  
միւս կողմից նոր արհեստների տարածման  
խնդիրներն են, որ հանդէս են եկել և  
զբաղեցնում են թէ պետական մարդկանց  
և թէ մասնագէտներին: Եւ առաջիկայ  
ցուցահանդէսը ու ժողովը պէտք է նպաս-  
տեն պարզելու այդ խնդիրները և ծրա-  
րելու այնպիսի միջոցներ, որոնք կարող  
ընթացին տային տնայնագործութեան շա-  
հերը պաշտպանելու և նրան զարգացնելու  
ընդարձակ կերպով:

Անդրկովկասում, ինչպէս յայտնի է, ներ-  
կայումս գոյութիւն ունի մի յատուկ հիմ-  
նարկութիւն, տնայնագործական կոմիտէս  
անունով, որ կոչված է զբաղվել մեր երկրի  
տնայնագործութեան զարգացումը և նպաս-  
տել մանր արհեստների զարգացմանը մեր  
երկրում: Այդ կոմիտէսի կողմից ուղարկ-  
ված է Պետերբուրգ ներկայացուցիչ՝ մաս-  
նակցելու ցուցահանդէսին և ժողովին,  
ներկայացնելու մեր երկրի կարիքները և  
ուսումնասիրելու այստեղ այն բոլորը, որ  
կարող է օգտաւէտ և նպատակայարմար  
լինել մեր երկրի համար:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԷԶՄԻԱՇՆԻ ԱՍՏՈՒԱՇՄԱՐԱՆԻՆ

#### IV

Մի ժամանակ, երբ Ստեփանոս Նազարեանցը,  
այդ իսկական, խոր հաւատացող քրիստոնէսայ  
մարդը, ասում էր թէ հայերի մէջ քրիստո-  
նէութիւնը լոկ ծիսապաշտութիւն է դարձել,  
լոկ մեքենայական մի արարողութիւն, և պա-

թեամբ ինքը կարողացաւ գիտնական արշաւանք  
կազմել դէպի Կապադովկիա կամ Գամիլը: Իր.  
Վ. Բելքը գիտնական եկպեղեցիային մասնակ-  
ցել են գիտնական Մաքս Յիմմէր, Տրապիզոնի  
հիւպատոս Մանուկին, հնադէտ օրիորդ Մա-  
յեվսիին և Գետարէկից վերցրած թարգման  
Ֆերիզը:

Ինչպէս անցեալում առիթ եւ ունեցել հա-  
ղորդելու, ընծակու դօկտոր Վ. Բելքը և Բեր-  
լինի համալսարանի պրոֆէսոր-դոցենտ Կ. Լե-  
մանը գերմանական կառավարութեան, Բ. Վիր-  
խովան հաստատութեան և Համբուրգի աշ-  
խարհագրական ընկերութեան նախաձեռնու-  
թեամբ և նիւթական օժանդակութեամբ մի  
քանի անգամ գիտնական արշաւանք են կազմել  
դէպի Թիւրքա-Հայաստան, ուսում-Հայաստան  
և պարսկա-Հայաստան, ուսումնասիրել և ի-  
րանց մի շարք պատմական, հնագիտական և  
աշխարհագրական գիւտերով լուսարանել են  
խաղերի կամ նախահայերի պատմութիւնը, որ  
մինչև դրանք ձեռնարկութիւնը խորին մթու-  
թեան մէջ էր թաղված:

Դր. Վ. Բելքը վերջին գիտնական արշաւան-  
քի նպատակն էլ նախահայերի պատմութեան  
ուսումնասիրութիւնն է եղել, բայց ուրիշ տե-  
սակէտից Այս անգամ ուսումնասիրել է նա-  
խահայերի արեւմտեան հին հարեւանների կամ  
Հին-Կապադովկիայի բնակիչների պատմու-

հանցում էր, որ աւետարանի լայն սկզբունքները  
ժողովրդականացան, եկեղեցին հիմնով աւետարա-  
նի ոգու վրա, — հայ տղատարեղաները անուա-  
նում էին նրան լուծարական, ազգի թշնամի և  
այնն Նազարեանցի պահանջները այնպէս էլ  
մնացին թղթի վրա, որովհետեւ ո՞վ է ուշադ-  
րութիւն դարձնում «աւաճանի» ասածների  
վրա: Հայ հոգեւորականութիւնը լաւ իմանում  
էր իր անիկը: Նա, օրինակ, չէր թարգմանեց  
աւետարանը, չէր տարածեց նրան ժողովրդի մէջ,  
այլ անազն փողեր ծախսեց աստուածաբաններ  
պատրաստելու համար: Մեզ պակասում էին  
եզոխական սկզբունքներ, մեզ պակասում  
էր կղերականութեան ոգին, և ան հայ աս-  
տուածաբանները այդ էլ բերին և հաստատե-  
ցին մեր մէջ:

Նազարեանցի, Նալբանդեանցի, Արծրունու,  
Բաֆիի քարոզները շարունակող մարդիկ գրեմ-  
վեցան մեզանում: Աստուածաբանները չէ հաս-  
կացող են ձեռնարկ այդ վարդապետների վե-  
րաբերմամբ: Կարապետ շարդապետը այսօր  
յայտնում է «Արարատում» թէ մենք, խօսելով  
քանանների և եկեղեցական բարեկարգու-  
թիւնների մասին, ամենեւին նկատի չունենք  
քրիստոնէութիւնը, եկեղեցին, այլ ուզում ենք,  
որ քանանա յանձն առնելով այդ պաշտօնէու-  
թիւն իրրեւ պորտուալի, իբրև անհրաժեշտ  
չարեք՝ սոսկ մի հասարակական գործիչ լինի  
չըրպատողների համար:

Կարապետ վարդապետը խիստ «խորհմաստ»  
փրկստիպ է եղել. նա գիտէ թէ ինչ կայ  
մարդկանց սրտում, գիտէ թէ հայոց եկեղե-  
ցու դէմ ինչ սոսկալի հաւաքութիւն է սարք-  
վում: Ապացոյցները առձեռն են: Մենք ատելով  
ասում ենք կղերականութիւնը, մենք չենք  
հաշտվում այն մտքի հետ, որ Օրմանեան ձե-  
տերը եզոխութիւն մտցնեն մեր մէջ, քան-  
դէն, ոչնչացնեն մեր ժողովրդական եկեղեցին,  
անհամբերողութիւն, ֆանատիկութիւն, ժո-  
ղովրդական իրաւունքների խախտում հաստա-  
տեն մեզանում: Իսկ այս բոլորը — ինչ կաս-  
ված Կարապետ վարդապետի համար — շատ լաւ  
ցոյց է տալիս, որ մեզ եկեղեցի, քրիստոնէու-  
թիւն չէ հարկաւոր:

Ոչ, աստուածաբան վարդապետ, դուք չարա-  
չար սխալվում էք: Եթէ մենք անտարբեր լի-  
նէինք մեր եկեղեցու վերաբերմամբ, եթէ մենք  
չընդունէինք, որ եկեղեցին խոյր բարոյական-  
թիւնն էր, որ ունի կատարելու մեր ժողովրդի  
համար, հաւատացե՛ք, ոչինչ ուշադրութիւն  
չէինք դարձնի ձեզ վրա, թոյլ կը տայինք, որ  
դուք լինէք ինչ ուզում էք, քարոզէք ինչ կա-  
մենում էք, մի խօսքով ձեր խոցում տապալ-

թիւնը, որի մասին առաջներում ոչինչ յայտնի  
չէր: Խաղերի պատմութեան վրա կարող էր  
մեծ լոյս արձակ այն ցեղի պատմութեան ու-  
սումնասիրողութիւնը, որ 7—6 դարերում (Ք. ծ.  
ա.) Կապադովկիա է գաղթել և ինչպէս մինչև  
այժմ եղած պատմական պատկանելի յիշատա-  
կարանները ցոյց են տալիս, Տոսպ-Վանի  
նախահայերի հետ սերտ յարաբերութեան մէջ է  
եղել Այդ յարաբերութիւնը լաւ կարող էին  
պարզել ինչպէս խաղերական, այնպէս էլ Կա-  
պադովկիայի տեղական հեթոթական սե-  
պաճեւ արձանագրութիւնները կամ հերոզիֆ-  
ները, բայց դժբաղդաբար հնագիտութեանը մին-  
չև այսօր չէ արդիւն վերոյիշեալ արձանագ-  
րութիւնները թէ ըստ իրանց լեզուի են թէ  
լուծել Պրոֆէսոր Եանսենի հեթոթական ար-  
ձանագրութիւնների լուծման համար առաջար-  
կած մեթոդը խիստ զննարարութեան չէ դի-  
մանում: Եթէ գտնվել երկուլեզուեան (օր.  
ասորական-հեթոթական) մի սեպաճեւ արձա-  
նագրութիւն, այն ժամանակ վերոյիշեալ ար-  
ձանագրութիւնների ընթերցման բանալին կը  
գտնվել մեզ յայտնի ասորեստանեան արձանագ-  
րութիւնների լեզուի շնորհիւ:

Դր. Վ. Բելքը իր ճանապարհորդութեան ժա-  
մանակ հետեւեալ տեղերն է այցելել և ու-  
սումնասիրել: Պոլսից Սամսոնի վայրով գնացել է

վէք ձեր իւրի մէջ: Բայց հօ տեսնում էք, թէ  
որքան մեծ ուշադրութիւն ենք դարձնում ձեզ  
վրա. հօ տեսնում էք, որ չը նայած ձեր խեղ-  
ճուկ հեծեծանքներին, մենք զննարարում ենք,  
մերկացնում ենք ձեզ և ձեզ նմաններին, պա-  
հանջներ ենք անում անդադար, թէ և գիտնք,  
որ մեր պահանջները կատարողը դուք չը պի-  
տի լինէք:

Դուք կուրացած էք կատայական մոլորու-  
թիւններից, հետեւապէս չէք նկատում, թէ ինչ  
ենք մենք պահանջում: Բայց կան կողմնակի  
նայողներ, կան մեզ հակադրողներ, և նրանք  
մի այնպիսի ոյժ են կարողում, որից դուք այ-  
սօր վախում էք: Այն, ինչու թագցնել, դուք  
խոստովանում էք, որ «Մշակը» ժողովրդակա-  
նութիւն, հեղինակութիւն ունի, որ մեզ կար-  
գում են հազարաւոր մարդիկ կղերական կաս-  
տայականութեան համար սա գուցէ և շատ  
սարսափելի լինի, բայց «Մշակը» կատայակա-  
նութեան օրդան չէ և հայ ժողովուրդը, որի  
համար է նա ապրում, շատ լաւ գիտէ, որ իր  
չանքը, իր իրաւունքներն է նա պաշտպանում:

Ինչ վնաս, եթէ ժողովուրդը ճանաչէ ձեզ,  
ինչպէս դուք կաք: Մենք ամենեւին չենք վա-  
խենում դրանից: Հնդկականակն, շատ անհրա-  
ժեշտ ենք համարում այդ բանը: Այսօր էք  
դուք մի սրտաւուն չընդունեցե՛ք դիմում  
մեզ. «Նորի» արեք, բացատրեցէք, որն է լու-  
սաւոր գործունէութիւնը հայ հոգեւորականի  
համար: Հրաշալի անմեղութիւն... Իբր թէ չը  
գիտէք, իբր թէ մինչև այժմ ոչինչ չէք կար-  
դացել: Այդ «Նորի» ձեզ անելու համար ես  
հարկադրված պիտի լինեմ մի առ մի կրկնել  
այն, ինչ գրվել է մեզանում ամբողջ կէս դարի  
ընթացքում, այն, ինչ ասում, կրկնում, պա-  
հանջում են անցեալ դարի յիսնական թուական-  
ներից մինչև մեր օրերը: Դենք թէ ես կա-  
տարեցի այդ բոլորը: Բայց ինչ երաշխաւորու-  
թիւն կայ, թէ դուք իմ այդ «Նորի» տեսնե-  
լուց յետոյ էլ նորից չէք վեր կենայ, քնից նոր  
զարթնածի պէս չէք սորոքի մեր աչքերը և էլի  
չէք ասի: «Նորի» արեք, բացատրեցէ՛ք որն է  
լուսաւոր գործունէութիւնը հայ հոգեւորակա-  
նի համար:

Ոչ, ես ձեզ չեմ անի այդ «Նորի»: Ինչքան  
նեղութիւն կրեցէք, ինչքանք, եթէ շնորհք ու-  
նէք, դրեք ձեր սեղանի մի կողմում այն բոլորը,  
ինչ գրել ենք մենք և մեր նախորդները, իսկ  
միւս կողմում այն, ինչ ասել էք դուք և ձեր  
նախորդները: Նայեցէք դոնէ մի անգամ էլ աս-  
տուածաբանների «Արարատին»: Այդ «Արարա-  
տը» չէր, որ փառաբանում էր տիրացուարան-  
ները և ապա խոստովանում, որ հայ քանանա-

Ամասիա և Նիկոս կամ Նոր-Կեսարիա պատ-  
մական տեսակէտից շատ նշանաւոր քաղաքները,  
որոնք գտնվում են Հին-Կապադովկիայում: Յե-  
տոյ իր ճանապարհը շարունակել է դէպի Դիոզ-  
քաղաքը, որ գտնվում է Հին-Կեսարիայի կամ  
Մաթակի հարաւային կողմում: Դիոզկում եր-  
կար ժամանակ կանգ առնելուց յետոյ անցել է  
մինչև Տավրոսեան լեռնաշղթայի հիւսիսային  
ստորոտը, որտեղից նորից վերադարձել է Պո-  
լիս Ազիլիէ, Սիլվա, Ամասիա, Սամսոն, Տրա-  
պիզոն և Քերասոն քաղաքներով: Ամասիայի  
և Սամսոնի հազարաւորեան աւերակները, դժ-  
բաղդաբար, նրանց ներկայ բնակիչների շնորհիւ,  
բոլորովին ոչնչացել են: Իրիս գետի մօտ մին-  
չև այժմ մնացել են Պոնտոսի թագաւոր Մինը-  
րատի ամրոցի աւերակները: Ամասիայի (Ստրա-  
բոնի հայրենիքը) մօտ գտնվող ժայռերի մէջ  
հազարից աւելի տունէնէնք են մնացել, որոնք  
գաղտնի ճանապարհներով տանում են դէպի  
գետի ափերը: Այդ հսկայական տունէնէների  
ճարտարապետութիւնը շատ նման է վանի-  
չրանցների ճարտարապետութեան, որ նոյն-  
պէս մի ապացոյց է Ամասիայի բնակիչների նա-  
խահայերի կամ խաղերի հետ ունեցած ուս-  
այական ազգակցութեան:

Պոնտոսի թագաւոր Մինըրատի ամրոցում  
ժայռերի մէջ փորված են բազմաթիւ գե-  
րեզմաններ, որոնք, անկասկած, թագաւոր-





տարվեց Կայսր Ալեքսանդր III-ի համար նա- հանգապետի եւ փոխ-նահանգապետի ներկա- յութեամբ: Ռուսաց քաղաքային երկրորդ թատ- րոնի վարչութիւնը պայման կապեց մի տարով Նէզլօրինի հետ, որպէս անտրպրէտներին հետ:

ՅԱՐԻՑԻՆ: Չայնաւորները կատարված ընտ- րութիւններին դէմ երկու բողոք է տրված նա- հանգապետին:

Այստեղ ճիշդ տեղեկութիւն է ստացված, որ վաղիկավկազեան ընկերութիւնը երկաթուղու ճիւղ է անցկացնելու դէպի Տոււայպէ 1903 թ.ից:—Յօգուտ շամայնցիների երկու ներկա- յացում տեղի ունեցաւ Զուտ արդիւնքը հա- զար բողոքից աւելի է:

ԼՕՆԻՕՆ: Առեւտրական պայտուռ փոխ-ծո- վապետ Բէրէսֆօրդ այն միտքը յայտնեց, թէ հարկաւոր է հիմնել ծովապետութեան կից ա- ռանձին լորջի պաշտօն, որը պէտք է կառավարէ ծովային պատերազմական բաժինը եւ հոգ տանէ նաւատորմի պատերազմական պատրաստու- թեան մասին: Որպէս գոյութիւն ունեցող կազ- մակերպութեան պակասութիւնների մի օրինակի վրա, Բէրէսֆօրդ մասնացոյց արեց քարածուխի պաշարների պակասութեան վրա Գիրբարտա- րում եւ Մօրտեւուս Իմանայով պաշարների դրութեան մասին, Բէրէսֆօրդ առաջարկութիւն արեց իր իշխանութեանը եւ սպանաց իջեցնել զբազան եւ հրատարակել հանգամանքները լրա- գրներում, եթէ առաջարկութիւնը չը յարգվի:

ԼՕՆԻՕՆ: Ասում են, որ Դելարէյ հաղորդեց իր ինքնագիր նամակով տիկին Մէտուէնին, բրիտանական իշխանութիւնների միջոցով, թէ մտադրութիւն կայ ազատ թողնել նրա ամուս- նուն, եւ որ զինուորական միջնաբերդից կը յայտնէ այդ բանի համար իր երախտագրտու- թիւնը, բայց ոչ թէ բօժնական գններովն ա- զատելու ձեւով:

4 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բիւլլետէն մարտի 2-ից Նո- րին Բարձրութիւն Պրինց Ալեքսանդր Պետրովիչ Օրդնաբուրգսկու առողջական դրութեան մա- սին. «Բարձր տաքութիւնը—3,75, ինքնազգա- ցումը եւ ակորժակը բաւարար են. այսօր տա- քութիւնը—3,6, վէրքերը դրութիւնը բնական է. ոչ թերը եւ ակորժակը կատարելապէս գոհա- ցուցիչ են»: Ստորագրեցին Վելիամինով, Սօր- վատ, Սամին, Տրոֆիմով:

ՐՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Գններաւմայեօր Իվա- նովի նախագահութեամբ կայացաւ առանձին խորհրդակցութիւն խոր նաւահանգիստ կա- ռուցանելու հարցի մասին:—Թոյլատրված է բանավ ներկայ տարում զիւղատնտեսական ցու- ցահանդէս:—Ստացված է տեղեկութիւն Պե- տերբուրգից, որ խորը նաւահանգիստ թոյլա- տրված է կառուցանել ոչ թէ Կէրչուս, այլ Տա- քանբուրգում:

ԲԱՌՈՒՄ: Չուրուկուտ տեղում դպրոցի ի- զական բաժանմունքին կից բացված են ձեռա- գործի եւ ուսուցիչ ձրի դասընթացքը չափահաս թիւրքուհիների համար:—Յատուկ յանձնաժողովը մշակեց քաղաքային թատրոնի կառուցման եւ քաղաքային հասարակական գրադարանի հիմնարկութեան նախագիծը՝ յա-ւերժացնելու համար Ռուսաստանի հետ Բա- թումի միացման քանակ եւ հնգամակար:

ԽԱՐԿՈՎ: Լոյս տեսաւ «Мирный Труд» ամ- սաբերի առաջին տետրակը, որ պրօֆէսօրների խմբի հրատարակութիւն է:

ՄՕՍԿՎԱ: Մօսկվայում կանանց բժշկական ինստիտուտ հիմնելուն օժանդակող ընկերու- թիւնը միջնորդութիւն է յարուցանում, որպէս զի ինստիտուտի կառուցման վրա դրածովի այն հարկը հազար բորլին, որ կտակել է Աստրոկովը Մօսկվայում կանանց համար բարձ- րագոյն դպրոց բանալու նպատակով: Ինստի- տուտի կառուցման համար առ այժմ հաւաք- ված է 2408 բորլի:

ՅԱՄՍԿ: Ժամանեց բուխարական էմբրո ԲիւիՍի, Մօսկովայից, ուսւ վաճառականնե- րից տեղեկութիւն է ստացված, որ Ուլիսսուտա քաղաքում բացված է ուսւ-յինական բանկի բա- ժանմունքը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պօլտավայում, Վիլնուս եւ Կիւիվում հոգեհանդիսներ են կատարված ի Տէր հանգուցեայ Կայսր Ալեքսանդր II-ի համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Финляндская Газета» լրագ- րում տպված է որոշումն՝ որով թոյլատրվում է Ֆինլանդական սենատին կարգապահական պա- տիժների ենթարկել սենատի պաշտօնական ան- ձանց եւ պաշտօնեաներին:

Խմբագիր՝ ԱԼԷԳՍԱՆԴԵՐ ԲԱՄԻՍԿԻ  
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ  
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՔ-ԱՂԱՄԱԿԱՆ

ՅՕՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿՐՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շարքը մէկ անգամ հինգրորդի օրերը դուրս է գալիս ցե- րեկվայ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու զիւրբուլայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպէին):

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյեան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.):

Պատասար գնացք Բագուից դուրս է գալիս զիւրբուլայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպէին):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 9 ժ. 28 ր. (11 ժ. 26 ր.):

Պատասար գնացք Բաթումից դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր. 12 ժ. 45 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.):

Պատասար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 10 ժ. (10 ժ. 58 ր.), հասնում է Ղարաբաղի իրաւաստեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալէքսանդրօպօլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաբաղ- լիսա զիւրբուլայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Պատասար գնացք Կարսից դուրս է գալիս ցե- րեկվայ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէք- սանդրօպօլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաբաղ- լիսա զիւրբուլայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Իսան գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցե- րեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանա- հին ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Ղարաբաղ- լիսա երեկոյեան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Իսան գնացք Ղարաբաղի իրաւաստից դուրս է գալիս առաւօտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հա- սնում է Սանահին ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍՏԱՐԴԵԱՆԻ

(Կուլիա, Վորոնոյովի արձանի հանդէպ)

Ա մ ե ո ռ , բ ա զ ի կ ի ռ ա կ ի օ թ ռ ի ց :

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ե Ե Բ Ը :

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժու- թեան, վնասարկան (սիֆիլիս) և միլատեա. հիւանդ.

Կ. Մ. Զիլիօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդալիսի.

Կ. Ի. Գրիլիկ—12—1 ժ. ականջի, քթի և կո- կորդի.

Զ. Ի. Բարանսեանց—11—12 ժ. կանանց և երեխայի հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երեխայից.

Ե Բ Ե Կ Ո Ն Ե Բ Ը

Ն. Ն. Ռոսսաբուլկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու.

Ա. Ն. Եպիփոլովի—6—7 ժ. նեարդալիսի (եղկ տարբով), վնաս. և մորթու.

Գ. Ս. Թարխանեանց—7—7/2 ժ. ներքին և երեխայից.

Բ. Ա. Նաւասարդեանց—7/2—8 ժ.

Վնարը 50 կ. չքատները ձրի շամախորհրդի (կօսիլիուսի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Առվանիսկի—տանը. ծաղկահատ և բը- ժըլական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍՏԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մե- ջոցներով մասնաւորապէս

ԲԳԻ, ԲԹԻ, ԱԿԱՆՁԻ ԵՒ ԿՐԻՔԻ ՀԻՒԱՆԴՈՒ- ԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергиевская ул., д. 12.

Ծ Ա Վ Ի Ո Ւ Մ Է

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

սպիտակ Բաղդադի տեսակից, պատրաստված Պատերի օրատեմով:

Դիմել Թիֆլիսում—Пушкинская улица, домъ Теръ-Асатурова № 14. Հասցեն ղռնա- պան Առաքելին:

Կամ գիւղում—Ордубаты, сел. Азы, Ананиі Теръ-Арутюнянчу.

3—5

ԱՐՏԻՍՏԻԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, մարտի 9-ին

Դ ե Ր ա ս ա ն Ա Ր Մ Ե Ն Ե Ն Ը

Իր առաջին դերուտի համար կը տայ

ՎԱՂԱԺԱՄ ՎՃԻՌ

Կօմեդիա 3 գործող., հեղ. Ալբրէդ դը Միւսէր:

Տօմակները զաճառվում են թարօնի կա- սայում:

Սկիզբը ժամի 8 1/2-ին երեկոյեան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Թարգմանութիւն

Կ. ԻԻԹԻՆՃԵԱՆ ԷՖԷՆԴԻԻ

Երեք հատորի գինը 15 դոբրուչ:

Խիստ յանկեան վէպ մը. որ անցեալ տարի «Սուրհանդակ» լրագրին մէջ հրատարակուեցաւ Էրբեւ թերթում եւ մեծ համակրանքով ու հե- տաբարութիամբ կարդացուեցաւ:

Կը զանվի Պաղարղիւան գրատունն, Սուլթան համաթ թիւ 14, եւ գրավաճառաց ջով:

4—5

Լոյս տեսաւ

ԻՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԻՈՒ

армянскій ПОЭТЪ

СМЪАԴԻ ՃԱԽԻ-ԱՅԻՅԻ

(Գնահատական էտիւդ)

Գինն է 1 Ր.

Գրքից կցած են՝ Սմբատ Շահ-Ազիզի լու- սատիպ պատկերը, «Աւետի Կլաթ» մի շարք կտորների եւ այլ ոտանամուրների ուսուբէն թարգմանութիւնը:

Ցանկացողները դիմում են հեղինակին հե- տեւեալ հասցեով՝ Москва, Леонтьевскій пер., № 11, кв. 17, Юрю (Georgiu) Алексѣевичу Веселовскому. 7—10

ԻՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՀԵՍԻ ՀԱՄԱՐ

Հ Ա Ր Կ Ա Ի Ո Ր Է

Գ Ա Ն Չ Ա Պ Ա Հ

հմուտ ուսուց լեզուին, ամսական 20 դոբր- լիով Տրվում է ճաչ եւ սենեակի ծանապար- հածակը երկու հաշուով. Դիմել՝ Ногайскъ. Таврическая губернія. Лѣсной складѣ. Ни- китѣ Егоровичу Черчепову. 4—4

4—4

ԳՈՒՏՏԻՆԵՐԻԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վ ա ճ ա ո վ ու մ ե ն ՚

«Որոտակված կեանք», վէպ, Լ. Մանուէլեանցի—1 Ր.

«Տիրապետչի» պատմական դրամա 5 արար., Լ. Մանուէլեանցի—50 կ.

«Բանաստեղծութիւններ եւ պօէմաներ, Լ. Մանուէլեանցի—50 կ.

«Այբբենարան կամ քերական»—5 կ.

«Մայրենի խօսք», Յ. Կուսիկեանի եւ Լ. Սարգսեանցի—70 կ.

«Նկարներ կամ ծաղկաքաղ նամակներ» Ս. Յ.—50 կ.

«Զեւոնարկ կազմարարութեան արհեստի մասին, Զ. Սա.—25 կ.

«Վարուարի որսը», պօէմա, Վ. Միրաբեանի—40 կ.

«Տարեք Ազգագրութեան», թարգմ. Ի. Յարութիւնեանի—50 կ.

«Սիջնով դատաստան», Ուայտի, թարգմ. Ս. Մ.—5 կ.

«Պատմաւածքներ» Վ. Փափազեանի—50 կ.

«Գեղունի» ա. եւ բ. տետրակները միասին—80 կ.

«Թագի համար», ողբերգ. 5 արարուածով, Կօպլէի, թարգմանութիւն Մանուչարի—50 կ.

«Դարութիւն կամ նոր մեթօղ ֆրանսերէն սովորելու համար, Ե. Յ. Յովհաննիսեանի, ա. եւ բ. մասերը իր բանալիով, կազմած—2 Ր.

«Ամուսնութեան առողջապահութիւն», թարգմ. Յակ. Միսակ—50 կ.

«Առողջապահութիւն», թարգմ. Էթմէքեանի—60 կ.

«Գերեզմանք երիտասարդաց», Ա. Հայկունի—50 կ.

«Գաղտնիք բնութեան կամ սկզբունք մարդկային ծննդականութեան, Ա. Հայկունու—50 կ.

«Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան, Գարաջաշեանի—40 կ.

«Դասագիրք գործնական բարոյագիտութեան», Թ. Երուսաղ—20 կ.

«Մոցի ուսուբէնից հայերէն բառարան», Յ. Ա.—45 կ.

«Միխիթար կամ Միխիթարեան յօբելեան, պատկերազարդ—2 Ր.

«Թատրոն», գրական եւ թատերական հանդէս 8-րդ դիւրը—2 Ր.

» տարեկան բաժանորդագրիւր—3 Ր.

«Ատաների առողջապահութիւն», Իւթիւճեանի—25 կ.

«Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Կ. Պօլիս, կազմած—2 Ր.

«Մեղաներ» Լանստրօտի, թարգմ. Զօկի—15 կ.

«Բանաստեղծութիւններ», Բ. Թաղէտեանի, հեղ. պատկերով—20 կ.

Նոյնպէս եւ այլ զանազան գրքեր: Ամեն մի նոր լոյս տեսած գիրք դրամատուր ձեւով թերթում խոխոյն: Պատուէրները կատարվում են խոխոյն, եթէ միայն պատուէրած գրքերի արժէ- 1/4 մասը ստացվում է:

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустану, Лорисъ-Ме- 2—3

Ковская ул. № 11.

ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆՊԵՏԸ

հրակիրում է այն անձանց, որոնք գնում թատրոն, կայարան եւ այլ բազմամարդ զեր, ֆայտօններով, վճարել կառապան վաղօրօք, որովհետեւ կարգերի կանգ վերոյիջեալ տեղերի դռների առաջ կան- նին վճարը տայու համար, արգելք է դա- նուելից եկող հասարակութեանը:

ՄԻ ԿԻՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ

ՆԱԽԼԵՐՆԻԿՆԵՐ ՊԱՀԵՆ

Офисерская ул. д. Нудель, № 9

Հարցնել տիկին Եղիարէթ Զանձեանին: